Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 278 - Ա
որոշման

«ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման և էներգախնայողությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրում բնակվող թվով 15 ընտանիքների տների տանիքներին անհատույց արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Ներքին Հանդ բնակավայրում բնակվող մնացած ընտանիքները ապահովված են արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայր, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	3,748,750 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրերում բնակվող, արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգեր չունեցող թվով 15 ընտանիքներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մայիսի 19-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայրերում բնակվող թվով 15 ընտանիքների տների տանիքիներին արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Իրականացվելու է 2025 թվականի մայիսի 19-ից մինչև 2025 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 3,748,750 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	15 բնակիչների տան տանիքների ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 3,748,750 դրամի չափով
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ